

Նվարդ Մելքոնյան

Ծնվել է Երևանում: Ավարտել է ԵՊՀ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության ֆակուլտետը, մասնագիտությամբ սոցիոլոգ է: Ավարտել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության և իրավունքի իստիտուտի ասպիրանտուրան: Երևանի Պետական Համալսարանի Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ է, սոցիոլոգիական գիտությունների թեկնածու: ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետում “Հասարակայնության հետ կապեր” մագիստրոսական ծրագրի ղեկավարն է, Վ.Բրյուսովի անվ. ԵՊՀՆ Տեղեկատվության և Հանրային հաղորդակցության գիտական-կրթական կենտրոնի ղեկավարն է: SPRING PR-ընկերության համահիմնադիր նախագահն է: Որպես դասընթացավար և փորձագետ ընդգրկված է բազմաթիվ ծրագրերում: Մասնավորապես, ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի Հեռուստուցման Լաբորատորիայի “Հասարակայնության հետ կապեր և մարքեթինգային հաղորդակցություններ” վերամասնագիտացման դասընտացներում, ԱՄՆ Ժողովրդավարության ազգային ինստիտուտի, Ադենաուերի հիմնադրամի, Եթիկայի դպրոցի և Հայաստանյան մարքեթինգի ասոցիացիայի կողմից կազմակերպվող վերապատրաստման և վերամասնագիտացման ծրագրերում: Բազմաթիվ գիտական հոդվածների (35-ից ավել) և մասնագիտական ուսումնական ձեռնարկների (5) հեղինակ է: Այդ թվում՝

- “Քաղաքական PR-ի և իմիջմեյքինգի հիմունքներ”, Ուսումնական ձեռնարկ ԵՊՀ Հրատարակչություն, Երևան, 2007թ.
- “Քաղաքական իմիջ. մեկնաբանություններ և ձևավորման սկզբունքներ: Դասընթաց հասարակագետների համար”, ԵՊՀ Հրատարակչություն, Երևան, 2007թ.

2015թ. պարզևատրվել է ԵՊՀ ոսկե մեդալով: